

21 SEP 2010

Ս. ԶԵԼԻՆՍԿԻ

5p

635

պ.

2-51

# ԳԵՏՆԱՆՈՒՉ

ԳԵՏՆԱՆՈՒՉ ԳՐԱԳՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



19  
19  
19

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Կ. Պ. Կազմովսկու, Գօլով. պր. № 12.

1898

635

2-51

100 APR 2013

206 47

Дозволено цензурою, Тифлисъ, 2-го  
апрѣля 1898 года.



# Գ Ե Տ Ն Ա Ն Ո Ւ Շ

(Arachis hepogaea L.)

Այս անունով երևան է եկել տարեւոր ընդաբեր մշակելի բոյսերից մէկը, որին զանազան լեզուներով և զանազան տեղերում այլ և այլ անուններ են տալիս՝ փայնանուշ, փայնալնիչոյ, փայնապիստոյ, փայնապիսեան։ Այս բոյսը «գետնի» անունը կրում է այն պատճառով, որ նրա սերմնարանը բեղմնաւորութիւնը յետոյ ծուռում է զէպի հողը, մտնում է նրա մէջ և այնտեղ կազմակերպում պտուղը։

Գետնանուշը (արախիս) շատ յեծ քանակութեամբ մշակուում է

Հիւսիսային Ամերիկայում, Տաճկաստանում, Սպանիայում, Իտալիայում և Ֆրանսիայում: Հիւսիսային Ամերիկայում համարեա ամեն մի փոքր խանութում կը գտնէք այս պտուղը, իսկ այնտեղի մեծ քաղաքներում ամեն մի փողոցի անկիւնում կը տեսնէք նեգրներին իրանց մանղալներով կամ փոքրիկ հնոցներով, որոնց վրայ բովում են և վաճառում այս անուշ հունդը:

Քիչ բոված գետնանուշը շատ համով է և սննդարար: Սպանիայում գործ են ածում նրա հատիկները հում կամ եփած ինչպէս սիսեռ: Ուրիշ տեղերում աղում են և խառնելով ցորենի ալիւրի հետ՝ նրանից հաց են թխում:

Գետնանշի սերմից ստացւում

է ընտիր իւղ, որ թափանցիկ է, քիչ նշի հոտ ունի, ցուրտ ժամանակում թանձրանում է ինչպէս ձիթենու իւղը, քաղցր է, դուրս է գալի մաքուր և արուեստական ձևով մաքրել չի պահանջում: Մաքրած գետնանշի սերմից ստացւում է մինչև 40 և աւելի տոկոս իւղ, այսինքն 100 փութ սերմից ստացւում է 40 փթից աւելի մաքուր իւղ: Նրա կուսբը (կոպտոնը) գործ է ածւում իբրև կերակուր, որ շատ սննդարար է: Զարմանալի չէ որեմն որ այս բոյսը շատ շուտ հետաքրքրեց գիւղատնտեսներին և տարածուեց զանազան երկիրներում մեծ ծաւալով: Այս վերջին տարիներում սկսեցին բերել այս

Հունդը նաև Թիփլիս և վաճառել  
Ֆունտը 20—25 կոպ.:

Գետնանշի մշակելու փորձը  
Անդրկովկասում առաջին անգամ  
արաւ Կովկասեան գիւղատնտեսա-  
կան ընկերութիւնը վաթսունական  
թուականներին, բայց անյայտ  
պատճառով այս գործն այն ժա-  
մանակ առաջ չգնաց: Այժմ գետ-  
նանուշը մշակում են մի քանի  
տեղերում: անցեալ տարի մի քիչ  
մշակուեց Ղարայեազի, Քուսթայի-  
սի և Գեօգչայի արքունական  
փորձնական և ցուցական Հան-  
դերում և Բաթումի ու Սուխու-  
մի գաւառների մի քանի տեղե-  
րում, նոյնպէս նաև Թուրքեստա-  
նում, Տաշքենտ քաղաքի մօտեր-  
քում:

Գետնանուշը մշակոււմ է այն  
տեղերում, ուր 5—6 ամիս է  
տևում տաք ժամանակը, որ կա-  
րենք է նրա հասունանալու համար:  
Այս բոյսը ցանում են փուխր և  
պարարտ հողի վրայ, որ եթէ բնա-  
կան չէ, պէտք է արուեստական կեր-  
պով մշակել, այսինքն լաւ հերկել,  
մաքրել ամեն տեսակ խոտի արմատ-  
ներից, փուխրացնել մանկեռով,  
կամ փոցխով և աղբ տալ հողին:  
Աւելի լաւ է քիչ աւազ խառնել հո-  
ղի հետ, որ փուխր է պահում նրան:  
Հարկաւոր է գետնանուշը ցանել  
գարնանը, երբ հողը բաւական տա-  
քանում է և տաք գիշերներ են լի-  
նում, որպէսզի կարողանայ ծլել և  
դուրս գալ, եթէ ոչ կարող է ցրը-  
տի պատճառով չծլել և հողի

մէջ փտել: Մօտաւորապէս հարկա-  
 ւոր է ցանել տաք տեղերում ապ-  
 րիլի 20-ից յետոյ, կամ աւելի լաւ է  
 մայիսի մէկից: Քաղհանը թեթեա-  
 ցնելու և պտղատուութիւնն աւելա-  
 ցնելու համար պէտք է գետնանուշը  
 ցանել շարքով,  $\frac{3}{4}$  կամ 1 արշին  
 հեռաւորութեամբ իրարից: Բայց  
 աւելի յարմար է առուններ շինել,  
 ինչպէս անում են լոբիի հա-  
 մար, և սերմերը ցանել առունե-  
 րի հողակոյտերի մէջ: Ամեն մի աե-  
 ղում պէտք է տնկել մի հատիկ  
 սերմ և ծածկել  $\frac{1}{2}$ -ից մինչև մի վեր-  
 շոկ հողով: Մի գետնատին (տասն  
 փութ ցորենի սերմ տանող տեղում)  
 տարածութեան համար բաւական է  
 3—4 փութ գետնանշի սերմ:

Կանանչելուց յետոյ ամեն կերպ

պէտք է աշխատել, որ գետնանշի  
 թփի չորս կողմի հողը փուխը  
 լինի: Վերևում ասացինք, որ ծա-  
 ղիկը թափելուց յետոյ նրա պտուղը  
 մտնում է հողի մէջ և այնտեղ մե-  
 ծանում, ուրեմն պէտք է հասկա-  
 նալ, որ թփի շուրջն եղած հողը  
 պէտք է փուխը լինի, որ պտուղը  
 կարողանայ մտնել հողի մէջ:  
 Այս նպատակով բացի քաղհան  
 անելուց, որ անպայման հարկա-  
 ւոր է, այն էլ միքանի անգամ  
 ամառուայ մէջ, թփերի շուրջն  
 եղած հողը պէտք է փուխը ցանել  
 և կիտել նրանց տակը (բողազ ա-  
 նել), մանաւանդ ջրելուց յետոյ,  
 երբ նրանց չորս կողմի հողը  
 փլում է և պտուղները հողի տա-  
 կից բացւում են:

Ձանքով մշակուած գետնանուշը շատ պտղաբեր է լինում և մի գետնատին տարածութիւն ունեցող հողից ստացւում է 100—150 փութ: Բացի սրանից ցողուններն ու տերեւները տաւարի համար ամենաընտիր ճարակ է, որ բոլոր խոտակեր անասունները շատ ախորժակով ուտում են: Ուշագրութեան արժանի է նաև այն, որ գետնանուշը թէև իւղատու բոյսերից է, բայց տղկահատի (գենագերջագի), կտուահատի, սորեկի և այլ իւղատու բոյսերի նման երկիրն ուժաթափ չի անում, այլ ընդհակառակը՝ իբրև ընդաբեր (добоное) բոյս, պարտացնում է հողը, ինչպէս օրինակ առուոյտը, կորինկան և այլն: Վերջում հարկաւոր ենք համա-

րում յայտնել, որ գետնանուշը Ղարայեազի արքունական փորձնական և ցուցական հանդում թէև ցանուած էր և քարքարոտ ու անջրտի տեղում, բայց և այնպէս բաւական լաւ և առատ պտուղ ստացուեց երկու տեղից էլ: Սչքի առաջ ունենալով այդ փորձը, կարելի է յուսալ, որ այս օգտակար բոյսը հնարաւոր լինի մշակել նաև այն տեղերում, ուր ջրաբքի հող չկայ և կամ ոռոգելու ջուրը սակաւ է:

Գետնանշի սերմ կարելի է ստանալ Կովկասեան Կայսերական գիւղատնտեսական ընկերութիւնից կամ պ. Նիկողայոս Տարատինովից, որի հասցէն Թիֆլիս է:

« Ազգային գրադարան



NL0282884

Handwritten text in a cursive script, likely a historical document or manuscript. The text is written in a dark ink on aged, yellowish paper. The script is dense and difficult to decipher due to its cursive nature and the fading of the ink. The text appears to be organized into several lines, with some words being larger and more prominent than others, possibly indicating a title or a specific section. The overall appearance is that of an old, well-used document.

